Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
նոյեմբերի 7 -ի N 1493 - Ն
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼՈՒ

NN ը/կ	Մարմինը	Ժամկետը
1.	Դատական դեպարտամենտ	սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը
2.	Դատախազություն	սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը
3.	Ազգային ժողովի աշխատակազմ	համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո
4.	Պաշտպանության նախարարություն	2019 թվականի հունվարի 1
5.	Զինված ուժերի գլխավոր շտաբ	2019 թվականի հունվարի 1
6.	Ռազմարդյունաբերության կոմիտե	2019 թվականի հունվարի 1
7.	Հատուկ քննչական ծառայություն	2019 թվականի հունվարի 1
8.	Քննչական կոմիտե	2019 թվականի հունվարի 1
9.	Սահմանադրական դատարանի աշխատակազմ	2019 թվականի հունվարի 1
10.	Պետական եկամուտների կոմիտե	2019 թվականի ապրիլի 1
11.	Ոստիկանություն	2019 թվականի ապրիլի 1
12.	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	2019 թվականի հունիսի 1
13.	Քրեակատարողական ծառայություն	2019 թվականի հունիսի 1
14.	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	2019 թվականի հունիսի 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
նոյեմբերի 7 -ի N 1493 - Ն
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրով սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու միջոցառումները:

2. Սույն ծրագրով նախատեսված հարաբերությունները տարածվում են օրենքի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 7-ի N 1493 -Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածով նախատեսված մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) վրա:

3. Որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-9-րդ և 14-րդ կետերում նշված մարմիններին առաջարկել, իսկ 4-6-րդ, 10-13-րդ կետերում նշված մարմիններին հանձնարարել որոշման N 1 հավելվածով հաստատված ժամանակացույցով նախատեսված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ քաղաքացիական ծառայության գրասենյակ) համաձայնեցմանը ներկայացնել նոր անվանացանկերը՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների դասակարգմանը համապատասխան կազմված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միաժամանակ:

4. Այն համապատասխան մարմինները, որոնք ունեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, սակայն չունեն գլխավոր քարտուղարի պաշտոն, ապա որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-9-րդ և 14-րդ կետերում նշված մարմիններին առաջարկել, իսկ 4-6-րդ, 10-13-րդ կետերում նշված մարմիններին հանձնարարել սույն

ծրագրի 3-րդ կետով նախատեսված անվանացանկում ներառել գլխավոր քարտուղարի պաշտոնը, ընդ որում, գլխավոր քարտուղարի պաշտոնը մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգն ուժի մեջ մտնելն զբաղեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով:

5. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

6. Որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-9-րդ և 14-րդ կետերում նշված մարմիններին առաջարկել, իսկ 4-6-րդ, 10-13-րդ կետերում նշված մարմիններին հանձնարարել որոշման N 1 հավելվածով հաստատված ժամանակացույցով նախատեսված ժամկետը լրանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում քաղաքացիական ծառայող համարված պետական ծառայողներին առանց մրցույթի նշանակել քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

7. Պետական ծառայության պաշտոններում օրենքով սահմանված կարգով փոխարինող և (կամ) պայմանագրով պաշտոն զբաղեցնող և (կամ) ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձանց հետ առանց աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև համապատասխան հիմքերի վերացումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

8. Համապատասխան մարմիններում թափուր և ժամանակավոր թափուր պաշտոնները մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգն ուժի մեջ մտնելն զբաղեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով:

II. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Առաջարկել դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական դեպարտամենտում դատական ծառայության պաշտոնների անվանացան-

կում ընդգրկված պաշտոնները՝ բացառությամբ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պաշտոնների, մեկամսյա ժամկետում ընդգրկել քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը ներկայացնել նոր անվանացանկերը՝ սույն ծրագրի 3-րդ կետին համապատասխան կազմված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միաժամանակ:

10. Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում դատախազության և դատական դեպարտամենտի պետական ծառայողներն օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով նշանակվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ